


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄՃ.
Պոլսոյ համար 10 ՄՃ.
Վեցամս. Կ. Պոլսոյ 4 ՄՃ.
Պոլսոյ համար 3 ՄՃ.
Օտար երկրներու 50 Պ.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուշ 5. աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կը-
լայ :
Իւրաքանչիւր թիւ 2 զրնոց թուով :



ԼՐԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱՋՈՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս դնացած լրագրաց ճանրու-
ծ ախբը Խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն Խմբագիր
— Տնօրէնին պիտի ուղղուի : Գալա-
թիա Ստամբուլուր շատաւսի թիւ
198, Դարձ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրուծ ախբը չվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտարած նամակ, յողում, եւ
կան տրուիր :

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՅՄԱՆԳՆՈՒՊՈՒՄ 19 ԸՈՒՆՎԱՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅՈՑ ԱՆՑԵԱԼԸ

Ազգի մը գոյութեան գլխաւոր նը-
շաններէն մին է մտաւորական շար-
ժումն, որ կրնայ շատ ձեւեր ունենալ :
Ասոնց կարգէն են գրականութիւնը,
մամուլը, դպրոցները, մատենադարանը,
հրապարակային տատենախօսութիւնը,
և այլն : Բնատի գոհութեան արժանի
կը համարենք որ Օրթոդոքսի ազգա-
յինը մտաւորական կեդրոն մը հաս-
տատել ուզեր են լատին մը բանալով,
ուր ինչպէս արդէն ծանուցինք՝ նա-
նաւոր ատենախօսութիւններ տեղի
ունեցան, և վերջ. Հ. Օրմանեանի ըն-
տիր ատենախօսութիւնն ալ ըստ խնդ-
րոյ բաղմամբ ազգայնոց մեր թեր-
թին մէջ հրատարակել սկսանք : Հե-
ղինակին ուսումնական և դրական տա-
ղանդն իւր գործը մասնաւոր ուշադ-
րութեան արժանի ընելով, հարկ կը
համարենք քանի մը խորհրդածու-
թիւններ ընել անոր վրայ :

Իւր գիտողութիւններն ըստ մեծի
մասին ուղիղ են, և հայրենասիրական,
քան զի ազգայնութեան դաւաժարին
աղինը դրոշմը կը դրեն : Նա Հայուն
անցելոյն և ներկային վրայ ակնարկ
մը ձգելով, ապագայն ևս ուշադրու-
թեան կառնու : Բայց Հայոց անցելոյն
վրայ խօսած ժամանակ, ինք ևս այն
կարծեաց մէջ ինկած է, զոր կը յայտ-
նեն շատ մ'օտարազգիք և նոյն իսկ
Հայեր, որք հարեանցի ակնարկ մը նե-
տելով Հայուն անցելոյն վրայ՝ այնպէս

կը դատեն թէ նշանաւոր կամ փառա-
ւոր գործեր ըրած չէ, ոչ աշխարհա-
կալութեամբ, ինչպէս Հռովմայեցիք,
ոչ ալ գիտութեամբ և գրականու-
թեամբ, ինչպէս Հելլենք, որոց քա-
ղաքակրթութեան մատուցած ծառա-
յութիւնն անուրանալի է : Բայց այս
կարծիքը պատմական ճշդութեան վը-
րայ հիմնուած չէ, այլ Հայոց վերջին
դարերու մէջ անկման վիճակին նայե-
լով գոյացած է : Բնական է որ ինկած
մարդու մը վրայ անձնութիւններն և օ-
տարներն արհարարահանօք դիտեն,
իրենց կարողութիւնն անոր հիգու-
թեան հետ բաղդատեն, և զայն կամ
ապիկար կամ անխելք դատեն, և
անց քննելու թէ արդեօք խեղճին
գլխին ինչ վերջանք անցած է, ինչ
պատճառներ իւր թշուառութիւնը
պատրաստած են : Եւրոպային ազատ
և քաղաքակրթ ընկերութեան մէջ
ծնած և մեծցած այն մեծատան դա-
կին կը նմանի՝ որ ուրիշները նուազ
էական կը կարծէ :

Ասկէ յառաջ կուգայ այն կարծի-
քը թէ Հայը միայն փառաւորական կամ
արհեստաւոր ժողովուրդ մ'են, թէ
իրենց գլխաւոր յատկութիւններէն
մին է արծաթախրութիւնը, թէ բար-
ձր դաւաժարներ չունին, թէ զին-
ւորական և դրական փառքէ զուրկ
են : Վերջ. Օրմանեան իսկ անկեղ-
ծօրէն խոստովանել կուգէ թէ, ինչպէս
զինուորական փառաց մասին, նոյն-
պէս և իմաստութեանց և գիտու-
թեանց վրայ խօսելով պարտաւոր ենք
ըսելու թէ գերիմաստ ժողովուրդ մը
եղած չենք, այլ միայն քանի մ'ան-
հատական ձիրքեր ունեցած ենք :

Վերջ. հեղինակին նկատմամբ անար-
դար չդատուելու համար պէտք է յա-
րել որ այս կարծիքը միայն իւրը չէ,
այլ շատերը նոյն հաւատքն ունենին,
բայց Հայոց պատմութեան և դրակա-
նութեան ուսմունքը զայն ուղղելու
վրայ է : Նախ զինուորական փառաց
վրայ խօսելով, երբ հին Հայաստանի
աշխարհացոյց տախտակը մեր աչքին
առջև կ'առնուի, կը տեսնենք որ
Հայաստան բաւական տեղ մը բռնած
է ֆոքր Ասիոյ մէջ, որ անշուշտ չէր
կրնար լինել առանց Հայկազանց և Սը-
շակունեաց քաղաքործութիւններուն :
Եւ բարեբաղդաւար Խորենացի մ'ու-
նեցած ենք, որ անոնց պատմութիւ-
նըն իւր անմահ գրչաւը մեզ հասու-
ցած է : Ստորջ. է որ այն ժամանակ-
ւան մեր գրականութեան վրայ որոշ
դադար մը չունինք, թէ և անշուշտ
նախնի Հայք գաւառութիւններն իսկ մը-
շակած էին, ինչպէս կրնայ տեսնուիլ
Խորենացւոյն գործին մէջ քանի մը
հատուածներէ : Բայց ասոնք դարգա-
ցած չենք, քանզի ազգային գիրն, որ
գաւառութեանց յառաջդիմութեան մի-
ակ միջոցն է, տակաւին գտնուած
չէր : Այսու ամենայնիւ չենք կրնար
ստորագրութեան պատճառ մը համարել
զայս : Մեր այսօրուան սքանչելի ման-
աւարկայ եղող ազգերը, Գաղղիա-
ցիք, Անգղիացիք կամ Գերմանացիք
այն ատենուան մեր վիճակին հետ
բաղդատմամբ գրեթէ վայրենի են,
և բնաւ չեն կրնար պարծիլ այն ժա-
մանակներէն մնացած ամենափոքր
գաւառութեամբ մը, այլ իրենց յառաջ-
դիմութիւնը գլխաւորապէս միջին
դարէն տալին է : Ընդհակառակն՝

Հայք կրնան պարծիլ գաւառութեանց
մէջ այն մեծ ազգերէն առաջ ըլլա-
լու վրայ, վասն զի երբ Հայ ուսա-
նողներ Սթէնքէն գաւառութեանց և քա-
ղաքակրթութեան ճաշակը կը տանե-
ին 'ի Հայաստան չորսուրդ և հինգե-
րորդ դարերուն մէջ, արդի քաղա-
քակրթ ազգերը տակաւին իրենց
վայրենութեան վիճակէն չեն ելած :
Այն ատեն Հայաստանի մէջ տես-
նուեցաւ ընդհանուր մտաւորական
շարժում մը : Հայկական գաւառութեան
ոսկեղինիկ դարն սկսաւ, և մատեն-
նազիրներն ուսմունքն ու գիտու-
թիւնները պիտի տարածէին, Հայաս-
տան վանքերով և վարժարաններով
պիտի ծածկուէր, և այսօր եթէ մեր
գրիչը Հայերէն լեզուով կը շարժենք,
այն կարճատեւ բարգաւաճութեան
ժամուն աշխատութեան արդիւնքն է :
Գերիմաստ ժողովուրդ մը պիտի ըլ-
լայինք, և այնպիսի գերիմաստ որ
գուցէ այսօր Գաղղիացիներէն կամ
Անգղիացիներէն նախադաս լինէինք,
եթէ ճակատագիրը թողուր որ այն
սքանչելի մտաւորական շարժումը
չընդմիջուէր : Արհամարհանօք չնա-
յինք մեր նախնեաց վրայ՝ գտնուե-
ղերիմաստ չկարծելով, այլ ցաւինք
գտնուեղ հաւածող անողոք բաղդին
վրայ : Ամեն կողմէ թշնամիներէ պա-
շարեցան, որք իրենց նորածին դար-
դացման և յառաջդիմութեան նա-
խանձելով կը խուժէին հիւսիսէն,
հարաւէն ու արեւմուտքէն Հայաստա-
նը կործանելու և աւերակ դարձնե-
լու համար : Այն ատեն անկարելի էր
մեզ գերիմաստ լինիլ ինչպէս անկա-
րող եղաւ Եւրոպա գերիմաստ լինե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆ ԱՆՑԵԱԼԸ, ՆԵՐԿԱՅՆ ԵՒ
ԱՊԱՅԱՅՆ

(Ծանոթութիւն հետ Բ. 2232)

Պէտք է որ բարոյական ներկայն
ալ բացատրենք : Բայց ո՞վ ձեզմէ հարկ
ունի լսել թէ Հայն ինչ բնաւորու-
թեան տէր է : Հաւատարիմ և հա-
մեստ ըսին իրեն համար ոմանք,
այլք զինքը իբր համբերատար և եր-
կայնամիտ նկարագրեցին : Եղեն որք
Հայոցն սրամտութիւնը գովեցին, և
ուրիշներ ալ իւր նենգամիտ դարու-
վեցին : Բայց ես չեմ վնասուր թէ
առաքինի է Հայն : հարկաւ ազգ մի
ոչ կատարեալ առաքինի կրնայ ըլլալ
և ոչ ալ բովանդակ մղի և չար սեպ-
ուիլ : Արդէն լսած եմ, մանաւանդ
օտարազգիներէն, որք կ'ըսեն թէ
Հայը վատ է և երկոտ : Իւր բռնա-
ւորին կը շողորդուի և իւր հարստա-
հարչին ձեռքը կը համարէ : չունի
այն անձնասիրութիւնը որ հարկաւոր
է իւր արժանիքը ճանչնալու և անձ-

նական պատուոյն պաշտպան ըլլալու :
Չեմ ուզեր քննել թէ յանցեալն մին-
չե ցո՞ր կէտ կրնար ճշմարիտ կամ
սուտ համարուիլ այդ ամբաստանու-
թիւնը, և ոչ իսկ պատճառաբանել
կ'ուզեմ ցուցնելու համար թէ պո-
տրապայման հեղութիւնն 'ի նմա՝
ոչ բնական էր : այլ բռնական, ոչ կա-
մաւոր՝ այլ հարկաւոր : Եւ բաւական
կը համարիմ դիտել, որ եթէ մեր
անցեալը, նաև մօտաւոր անցեալը,
կըցաւ այդպիսի գաղափարութեան տե-
ղի տալ, բայց այժման ներկայն ոչ
ևս, մինչ իւր հարստահարողներուն
դէմ կը բողոքէ, առաջի աշխարհի
ձայնը կը վերցնէ, և յարդարութենէ
պետութեանց իրաւունս կը խնդրէ :
Լսեցիք և դուք Պաշտպանողական ըն-
կերութեանց 'ի Հայաստան կազմուիլը
և աւագակները հալածելու համար
երկաթի գործեաց կիրառութիւնը :
Այն լուրը որ ձեզ ալ զիս ալ զգա-
ծեց, բաւական է ցուցնելու թէ եր-
կայնամտութիւնն ալ չափ մի ունի :
“Համբերութիւնը կեանք է” կ'ըսեն
մեր նախնիք ու կը կենային : Իրենց

որդիք կերեւայ թէ վերջին միւս
տոյն ալ սորվեր են, “չապն ալ տան-
ջանք է” :
Ազգի մը գիրքը կատարեալ չը-
կատուիր առանց իւր կրօնական ներ-
կայն ալ քննելու : Կամ փափուկ կէտ
մը՝ որուն մէջ մտնայ իսկ չէի ուզեր,
եթէ գիտնայի թէ առանց անոր խօս-
քըս պակասաւոր պիտի չմնայ : Ինչ-
պէս հոս ունինք դրաց մէջ, անանկ
ալ Հայ ազգին ամբողջութեան մէջ
դաւանութեանց տարբերութիւն մը
կայ : այլ թէ այս տարբերութիւնն
ի՞նչ է, ինչո՞ւ է, ինչէ՞ն է, ի՞նչպէս
է, ինչպիսի է, հաւատացե՞ք ինձ ուն-
կընդիւրք իմ, որ քննել հոս բոլոր-
վին աւելորդ է : Թողուցէք մեզ ե-
կեղեցականքս այդ խնդրով զբաղել,
մեզ որ այդ խնդրոց սկզբնապատ-
ճառն եմք եղած : Թերեւս, ինչպէս
զիրար չիմանալով տարածայնեցաք,
անանկ ալ զիրար իմանալով միաձայ-
նիմք : Գաւառութեանց տարբերու-
թիւնն այսօր 'ի բոլոր Եւրոպա կը
տիրէ և ամեն համազգիք համադա-
ւան չեն ոչ 'ի Գաղղիա, ոչ յԱնգղիա,

ոչ 'ի Գերմանիա, և ոչ այլուր : Ինչ-
ևս ատեններդ գարուս մէջ ազգային
միութիւնը չկախուի որ հանդանա-
կին բառերէն և ոչ ալ եկեղեցական
նուիրապետութեան դատաւարողու-
թեանն : Ասոնցմէ դուրս է այն կէտը
որուն վրայ կը հիմնենք մեր համագ-
գութիւնը, հայութիւնը, որ իւր ողին
կը սփռէ 'ի մեզ յամենեւին և կը
ներգարծէ յամենայնի, ևս և 'ի կրօ-
նականին, և 'ի մասիսի երկու զըլ-
խաւոր կատարելութիւններ կը նկա-
տեմ ես մեր ազգին մէջ :
Հայուն ողին առկա վեհանքն և
նուազ փոքրօքի է քան թէ այլոց ազ-
գաց քրիստոնէական ողին : աւելի
ընդարձակօրէն կը նկատեն երկնա-
պարզ և վարդապետութիւնը և անոր
դերաշխարհիկ արդիւնքը, և փո-
խանակ մանր լնդիւններէ չարաչար
հետեւութիւններ քաղելու, կը սիրէ
տարածել որչափ հնար է բարի հե-
տեւութիւնները :
Հայուն եկեղեցականութիւնը չէ
զեղած ընդհանրապէս այն մտղու-
թեամբ, որոց համար ուրիշ քաղա-

լու՝ երբ րարարտաները խուժելով
Հոսովն հիմնադրատակ կընեն և կար-
դա՝ եղիշէ, կարգա՝ Լատարիկրային
և ուրիշ Հայ պատմագիրներ, և դա-
տէ՝ թէ արդեօք կարելի՞ էր անոնց
նկարագրած դառն հանգամանաց
ներքեւ զարգանալ :

Բնական և դիտութեանց զար-
գացումն երկնային և խաղաղ ժա-
մանակաց արդիւնք է : Այլ էնքի հան-
րայեանութեան փառաւոր տաճաննե-
րը Պաշտօններ և Արիստոտելներ
ծաղկեցան, բայց երբ Ելլադային վը-
րայ ևս ձախորդութիւններ եկան,
այն ուսմանց օրրանն երկար դարեր
մատուրական ամայութեան տեսա-
րան եղաւ : Այսօր Դաւիթ-Անյաղթը
կամ Անանիա Շիրակացին խիստ վար-
կը մնան Եւրոպական դպրութեանց
հետ բարդամամբ, բայց անոնց գը-
րած ժամանակ Գերմանացիք կամ
Գաղղիացիք ինչ ունէին արդեօք :
և ո՞վ կրնայ պնդել որ եթէ այսօր-
ուան մեր չհաւնած Շիրակացիներ
բուն գործը քանի մը դար անընդ-
հատ խաղաղութեան շնորհիւ շարու-
նակողներ լինէին, մեք ալ Նեոտոններ
և Արտիստեր չպիտի ունենայինք :
Անկայն երբ Հայկական ընկերութիւն-
նը ցերեզման եղաւ այնչափ յարձակ-
մանց առջև, որոց դէմ իւր դարեւ-
րով դիմագրութիւնը գրնադարական
նուաղ փառք մը չէ, այնուհետեւ կա-
րելի չկաւ ուսմանը շարունակել,
բայց եթէ վանքի մը խորշը պահ-
ուած խեղճ Արեւելի մը միջոցաւ :
Ինչ կրնար պատահել այսպիսի վի-
ճակէ մը : Այս ձախորդ պարագայից
նայելով, մեր ձեռք անցած գրական
կամ ուսումնական հեղինակութիւն-
ներն, և այսօրուան Հայաստանի մէջ
մնացած հիմնարկութիւններն հարբս-
տութիւն համարելի են : Ի՞րչափ մեծ
և զօրուոր արդեւրէ այժմ բնաւ
հետք իսկ մնացած չէ :

Աւելի ճշգրտութեան մօտ պիտի
համարէինք Եւրոպացիներէն ոմանց
այն կարծիքը թէ Հայք Քաղդէաց-
ւոց կամ Ասորոց նման անհետաց-
եալ ժողովուրդ մ'են, եթէ իրօք
գառն հեղհուրթիւն մը կամ Հայերը
բոլորովին կրնաւ փորձ մը չլինէր :
Դառն հեղհուրթիւն մ'է, քանզի Հայք
վերականգնութեան գործնական
նշան մը չեն ցույցներ, և այն ժողո-
վուրդն որ ինքնին կեանք և վերա-
կենդանութիւն չկրնար ունենալ,
կամ չկործներ ունենալ, հասկ ու-
րեմն աւելի մեծ զանդուածներու
մէջ կը ձուլուի : Բնաւ շարժում չը

ցուցնող մարմին մը գոյութիւնէ դուրս
է, և Հայն իւր անշարժութեամբ
մինչև ցարդ հասարակ Եւրոպացիներ-
բուն անձանօթ կամ գոնէ անցեալ
դարուց ժողովուրդ մը կրնար հա-
մարուիլ : Բայց այս կարծիքն ևս ժա-
մանակը պիտի ցրէ, քանզի Հայք
արդէն մատուրական շարժման ըսկը-
սած են, ինչպէս կը տեսնուի իրենց
բազմաթիւ հրատարակութիւններէն
Եւրոպայի, Թուրքիոյ, Ռուսիոյ և
այլ երկիրներու մէջ : Իսկ Հայերը
կրնանք փորձը մեծ տէրութիւն
մ'ըրաւ և տակաւին չյաջողեցաւ :
Իւր հպատակ Հայերն արդարեւական
դիպացումով և ազգային դպրութեանց
ծառայութեամբ ուրիշ Հայերէ վար-
չեն մնար : Երբ Հայք իրենց փրկու-
թիւնն ու յառաջդիմութիւնը՝ վե-
րանակ բաժանման կամ օտարախի-
րութեան՝ արդային վերակենդանու-
թեան մէջ փնտռեն, այն ատեն ոչ ոք
իրաւունք կուսենայ զիրենք մեռ-
եալ ժողովուրդ մը համարելու :

Ինչպէս որ ծանուցեր էինք, երէկ
վարչութեան խառն ժողովոյ կողմէ
երեք եկեղեցականն և երեք աշխար-
հականն բաղկացեալ պատգամաւո-
րութիւն մը Բ. Գուռն երթալով
Բարձր Մեծ-Յարարքոսին ներկայա-
ցաւ, և Ս. Պատրիարք Հօր հրաժա-
րականին նկատմամբ դեռ որոշում
մը տրուած չլինելուն պատճառաւ
արդային գործոց տարտամ վիճակի
մէջ ինկած լինելուն, ինչպէս նաեւ
Հայաստանէն եկած նորանոր հարբս-
տահարութեանց լուրերուն վրայ Ն.
Բարձրութեան ուշադրութիւնը խնդ-
րեցին :

Լսածնուս նայելով, Բարձր Մեծ-
Յարարքոսը պատասխաներ է թէ հա-
րրտահարութեանց խնդրոյն համար
բանիբուն և ձեռնհաս խղամներէ և
Քրիստոնեայնէրէ բաղկացեալ խառն
յանձնախումբ մը որիկը որոշուած է
ի Հայաստան, և թէ փախուք ի
որ Սրբազան Պատրիարքն իւր հրա-
ժարականին վրայ չպնդէ, և այդ կազ-
մուելը յանձնախումբին նկատմամբ
խորհրդակցելու համար իրեն հետ
տեսակցի : Մեծ Յարարքոսն յարեր է
թէ տէրութեան բոլոր հպատակները
կատարեալապէս հաւատար են կառա-
վարութեան աչաց առջև, և թէ ի
մօտոյ ընդհանուր բարեկարգութեանց
և բարեկարգմանց գործադրութեան
պիտի ձեռնարկուի :

Եկեղեցեաց ներքին բարեկարգու-
թիւնը բաւական է այդ նպատակին,
որ և հնաւանդ և փորձեալ Ելլադու
գերազանցութիւնն ալ ունին Եկեղեցա-
կանք՝ որ այսու կանոնով կը վարին,
ժողովրդապէր են՝ և հանուրջ բար-
ւոյն մտադիր՝ քան թէ իւրեանց դա-
տուն, և քաղաքակրթեան Եւրոպէ,
որ ուրիշ ոչ ոքով վարժած է դասել
գեկեղեցականան, հիացաւ երբ տե-
սաւ որ Հայ արդիւն կրած վշտին դէմ
բողոքողաց գլուխը Պատրիարք մի է,
և Հայ արդիւն վշտով ձայնը համաշ-
խարհական Արեւադղին առջև Հա-
նայները երկու արքեպիսկոպոստնր,
և Հայ երիտասարդութեան իրաւուն-
քը պաշտպանող եկեղեցականաց հա-
մադումար ժողովը :

Հայոյն մատուրական, քաղաքա-
կան, բարոյական և կրօնական ներ-
կայն բացատրելով, միշտ իւր տեսա-
կան ներկայ գիրքը նկարագրած եւ
զայդ դուք ինձմէ ի հարկէ նիւթա-
կանն ալ կը պահանջէք, ու թէ նոր
ինչ լուրու համար, վասն զի և ոչ ը-
սածներս նոր են, այլ կը պահանջէք :

Սերաստիւյ կովտն՝ դիւղին դէմ
անցեալները պատահած բռնութեան
դէպքին նկատմամբ Պատրիարքարա-
նը տեղւոյն առաջնորդէն տեղեկու-
թիւն ուղած Ելլադով Գերաւաշնոր-
դն հեռագրաւ հաստատեց յիշեալ
իրադարձութիւնը :

Հայրենիք լրագրոյ վերջին թիւոյն
մէջ հրատարակուած հետեւեալ տողե-
րուն վերջին պարբերութիւնը շատ
ճիշդ է :

«Առական մը կայ հասարակութեան
մէջ իրար թէ Արմաշու Գեր, վանա-
հօր ստորագրութեամբ ընդդէմ վեհ-
կաթողիկոսին Մատիսի մէջ հրատա-
րակեալ նամակը Ն. Սրբազանութեան
կողմնէն տրուած է հրատարակու-
թեան :

«Մենք քննեցինք և ստուգեցինք
թէ այդ նամակը նոյն ինքն Արմաշու
միաբանութեան կողմնէն տրուել է
հրատարակութեան, որուն վրայ ցաւ
և վիշտ զգացեր է Ս. Պատրիարք Հայրենիք» :

Վաղըմ լրագրին իւր երէկուան
թիւոյն մէջ ծանուցանելով թէ Եւ-
րոպական տէրութիւններէն ոմանք
Հայաստանի հարստահարութեանց
նկատմամբ նմանօրինակ ծանուցա-
ղիր մը դրեալ են առ Բ. Գուռն, խոր-
հրդածութիւն մը կընէ յարելով թէ
Հայաստանի հարստահարութեանց
նկատմամբ Եւրոպական լրագրաց
չափազանց տեղեկութիւններ հա-
ղորդուած են և թէ Եւրոպայի մէջ
իրաց բուն վիճակին վրայ սխալ կար-
ծիք գոյացած է, և ընդ և ընդ :

Թուրք լրագրին այս անհեթեթ
խորհրդածութեան վրայ մեր խօսե-
լիքը բաւական երկար Ելլադով վաղ-
ւան կը թողունք :

Կարնոյ առաջնորդ Գեր, Յարու-
թիւն Արքեպիսկոպոսին և տեղւոյն
Քաղաքական ժողովոյ դիւանին ստա-
րագրութեամբ հետեւեալ նամակն եւ-
կած է Ամեն Ս. Պատրիարք Հօր :

Ամենապատիւ Սրբազան Տէր,

Ի թիւ 7 դեկտեմբերի և ի հա-
մար 148 ծանուցած եմք Ձերք բար-
ձր Սրբազանութեան Ալաշիքի տա-
ռապետ զաղթականացմէ 230 ըն-
տանեաց իրենց հայրենիք վերադար-
ձն, նոյնպէս և տեղւոյն կուսակա-
լին հրամանաւ նոյն զաղթականաց
քրդերէ և գաղթականներէ (մուհա-
ճիր) գրուեալ տանց, կալուածոց,

որովհետեւ ևս ձեզ Հայոյն ներկայն
խոտաղաց ցուցնել ընդհանուր մէկ
ակնարկութեամբ իւր ամբողջութեան
մէջ և առանց զանազանութիւն մը
ընելու, այս կամ այն դիւր : Խօսքս
աւելի պարզ ընեմ՝ Հայն ի ներկա-
լին կրնայ Ելլադ որ կենդանի արդ-
մը կաղմկու տեսական պայմանները
ունենայ, իսկ նիւթականապէս հարկ
եղած պայմանները չկարենայ ցուցը-
նել : Ասանկ է արդեօք :

Հայքս այսօր խեղճ վիճակի մը մէջ
եմք, արդը ցրտին և սիւռեալ է
ընդ ամենայն երես երկրի : Ինչպէս
փրարեր հովերէն ծեծուած ծառի
մը տերեւները կը սկսուին սոսա և
անդ, այնպէս արեւոյն Հայ գաղ-
թականք այն օրէն՝ որ հիւսիսէն ու
արեւելքէն յարձակմանք մեր արդ-
ութեան ծառը տալանապէսին :
Վրաստան, Պարսկաստան, Միջա-
գետք, Ասորք, Եգիպտոս, Փոքր
Ասիա, Թրակիա, Մաճառաստան,
Հնդկաստան, Ռուսաստան, Հնդկա-
ստան և ուրիշ աշխարհը Հայ գաղթա-
կանութիւններ ունին, Զարմանքով

ցորենի, յարդի և այլններու իրենց
դարձուին և բաւական հանգաւա-
թեամբ իրենց գեղերը տեղադրու-
լին :

Այս անգամ Պայագլիտի և Ալաշ-
կերտի մեր ազգայնացմէ, նոյնպէս և
տեղւոյն կառավարիչ Նուսուֆ փա-
շայէն մեր ստացած նամակներն (տ-
րոց վերջինին օրինակը ներփակեալ
կը գտնէք), կը ծանուցանեն մեզ թէ
կուսակալի հրամանագրին և մեր ա-
ռանձին գրութեան համաձայն, ոչ
միայն եւս դարձող դաղթականաց
ըստ վերագրելոյն օտարներէ կադ-
տեալ իրաւունքն իրենց վերադարձ-
ուած են, այլ և ձեռուան ստատիւ-
թեան պատճառաւ Ռուսիոյ սահ-
մանները մնացող և յառաջիկայ դար-
նան ի հարկէ ստիպեալ անպատճառ
վերադառնալիք համայն դաղթակա-
նաց տաւերն ու կալուածները հակա-
դրութեան տակ տուեալ են և ա-
ւանդ տրուած հոն դանտող Հայերուն,
որպէս զի՝ առանց ներգրութեան հա-
սածներնուն պէս իրենց յանձնուին,
Աստուծոյ մեծ շնորհակալութեան
արժանի է Պայագլիտի կառավարչին
այս ընթացքը, և չէ թէ միայն այս,
այլ և ուրիշ առաւելութիւններու
համար երկու ամսոյ չափ առաջ մեր
ազգայինք բազմաստորագիր հան-
րագրով մը դիմած էին տեղւոյն կու-
սակալին, որպէս զի չըլլայ թէ այս
կառավարիչը իրենցմէ վերջնէ, ու-
րովհետեւ փոխ-կառավարիչ էր, (Ռու-
սերն այս տեղերէն քայլաւոր միջո-
ցին) Բ. Գուռնն որ կառավարչի մը
ընտրուիլ գալն երկար ժամանակի կա-
րօտ Ելլադով, Բարձր, Խանայի փաշայն
անմիջապէս այս Եւսուֆ փաշայն նը-
շանակած էր փոխ-կառավարիչ Պա-
յագլիտի, որ հոս գարուն, մեր իրեն
ըրած յանձնարարութեանց կատա-
րեալպէս անալով, առանց Ձեզի ա-
ւանց Բ. Գ. Գրան կեդրոնական վար-
չութեանդ և նոյն իսկ տեղւոյն կու-
սակալին իմաց տալու կամ ձանձրա-
ցնելու, շատ մը կարեւոր բարեփո-
րոգութիւններ և երկրին վիճակին
ու գիրքին համաձայն բաւարարող
բութիւններ գործադրէք :

Տեղւոյն կուսակալը մեր ազգա-
նոց այդ հանրագրին իւր յատուկ
յայտագրով այն ատեն զրկեց Բ. Գու-
ռը բայց գործադրութիւնը կամ պա-
տմամբ մինչև ցարդ յապաղեցաւ :
Ինչպէս քանի մ'անգամներ, նոյնպէս
և այս անգամ մեր նոյն գաւառի աղ-
դայինք Եւսուֆ փաշայի նորանոր
արդարաւարական և յօդուտ տառա-

քակրթեալ արդաց մէջ կըրը իւր
յարգը կորսնցուցած է : Մեր եկե-
ղեցականք չեն դատուած իրենց աղ-
դէն, և ոչ ալ իրենց բաղդը ժողո-
վրդեան բաղդէն անձառած : Հայ
եկեղեցականութիւնը չկաղմեր ան-
մերձեանով դատ մը ապահարկ և ան-
դատակեալին անձանց, և ոչ ալ եւ-
կեղեցին իւր ընչիւք և հասիւք ան-
բռնաբարելի գրեական պէս անմատ-
չելի և դոց կը բռնէ ժողովրդեան
գէտի և ինք ի ներքոյ անկախօրէն նո-
րա սերտական եկամուտները կը վայե-
լէ : Մեր եկեղեցականք առհասարակ
չունին, ոչ սեղան, ոչ պնակ, և ոչ
այլով անուամբ կոչուած հասոյթներ
Եկեղեցեաց մատակարարութիւնը ժո-
ղովրդականաց ձեռքն է և եկեղե-
ցականք ժողովրդեան բաղդին բաղ-
դակից են : Եւրոպայի մէջ այսօր եւ-
կեղեցականներէն և աշխարհական-
ներէն շատեր եկեղեցական բարե-
կարգութեան վերանորոգմանը հա-
մար ամեն ճիշդ կը թափեն, և ծը-
բագիրներ յօրինելու կ'աշխատին :
Արդէն ըսած եմ և կ'ըսեմ թէ Հայ

կարգացի վերջի օրերս թէ Արդարաւա-
տանի իշխանն ալ Անդղիոյ հետ բա-
ցած պատերազմին սկիզբները, Հա-
յոց և Հրէից վրայ դիւսահարկ մը
գրած է իւր գանձուն գրամ հարե-
լու համար, որ բաւական և ունեւոր
հայոց յԱֆղանստան ևս գտնուիլը
կը յայտնէ : Այդ գաղթականու-
թեանց տարաբարդութիւնը իրենց
հայրենիքէն դուրս գտնուիլն է, ա-
պա թէ ոչ գաղթականք ուր որ են
շատ աւելի երկնային և հանդիսա են
քան թէ ի Հայաստան գտնուողնե-
րը : Հոն, թէպէտ շարունակ դաղ-
թականութեամբ նուազեալ, կը
գտնուի դեռ Հայոց մեծազոյն մասը
Բարձր Հայք և Վասպուրական, որք
են Կարնոյ և Վանայ կուսակալու-
թիւնը և իրենց գլխաւոր քաղաք-
ները՝ Կարն, Վան, Մուշ, Բաղէշ,
Խարբերդ, Երզնկա, Բարբերդ և այլք :
Հայութեան կեդրոնք են, ինչպէս
վերջին գնութիւնը և արդահամարք
հաւաստեցին, և հոն պէտք էր որ
մեք փնտռէինք մեր ազգի գիրքը :

Յաջորդ Բարձր

պէտք ըրած քաղաքները յիշելով, նոր հանրապետութեամբ մը կը պաշտպանուին զանգ ինքնիշխանութեան, որպէս զի առանց զանցառութեան և ժամանակաւորութեան չորհրդէն քիչ մը զիջելով զայսպէս իրենց և Արշակունի թշուառացեայ վրայ, և միջնորդել առ Բ. Գուգն Երեսմեք փաշայի կառավարութեան (էսպէս թէն) հրապարակելով փութով զրկուելու և Այսու յիշեալ լաւ պաշտօնէին Հայաստանի արարքը քաջալերած և մեր այն կողմի ազդեցիկն ընդ ուրա և զմեզ՝ պարտաւորած կը լինին քիչ մը Բարձր Սրբազնութեան ևնալ միշտ երախտագէտ և անձնուէր ծառայք։

Յարգելի Երեսմեք Կարնայ 1878 զեկտ. 28 Ատենապետ Ատենապետ Կ. Տ. Մեքէնքէն Գ. Մեքէնքէն

Խառն ժողովոյ որոշմամբ սոյն նախադրեալ պարտաւորութիւնը Բ. Գրան հաղորդուեցաւ։

Ի նպատակ Արարտեան ընկերութեան երէկ զիշեր արուած պարահանդէսն յաւանդուածէն աւելի յաւանդութեամբ կատարեցաւ։ Ի ներկայ յաւանդութեան մեծամասնութեան հանդիսակաւորաց։ Գաղղիոյ վաճառականներն իւր ներկայութեամբ պատուեց այս սոցալային յաւանդութեան հանդէսը, և ապա իւր խօսքերով քաջալերեց։

Մանրամասն տեղեկութիւնք վաղուան թուով։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(ՀԱՎԱՍ)

Լահոր 29 յունի.

Շիր Ալի Էմիրին եղբայրն Հաղարիւր կողայ Ռոսիոյ զօրավորին հնազանդութիւն յայտնելու։

Փարիզ 29 յունի.

Հանրապետականը Մարէշալ Մարք-Մանիէ հրաժարուի չեն ուղեր, բայց տրամադիր են ընդունել զայն։

Փարիզ 29 յունի.

Մարէշալ Մարք-Մանիէ հրաժարումն և վեհաժողովոյ՝ դաւանումն հաւանական կը թուին։

Հաւանական է որ վեհաժողովը Պ. Կըրէյի (երեսմեքական ժողովոյ նախագահն) հանրապետութեան նախագահ ընտրէ։

Նախարարաց խորհրդին նախագահ Պ. Տիւրքոյ յանձն չառնուր Մարէշալ Մարք-Մանիէ տեղ ընտրելի լինի։

Այս առաւօտ հասած հեռագրէք

Բեդրասուրի 30 յունի.

Լորիս Մէլիքով զօրավարը ժամտախտին զէմ ձեռք առնուած միջոցներուն դորձադրութեան համար լիազօր իշխանութեամբ ընդհանուր պատուիրակ պիտի անուանին։

Վիեննա 30 յունի.

Ներքին դործոց պաշտօնատան մէջ այսօր տեղի ունեցած բանակցութեանց միջոցին Ռուսները պատուիրակներն յայտարարեցին թէ ժամտախտի զէմ յանձնած ողովին ապաւորած ըստ միջոցներուն Ռուսներն պիտի մասնակցին։

Աթէնք 30 յունի.

Թագաւորն այսօր Գաղղիոյ զեպան Պ. Թիսօյին այցելութիւն մ'ըրաւ։

Մոսկովա փաշան երէկ Բրէյլէզա Հելլեն պատուիրակներն ընդունելով առանց ըստ. « Կը յուսամ որ մեր պաշտօնին նպատակն այնքան յաջող պիտի լինի որքան եղաւ մեր տեսակցութիւնն, և թէ իր բարեբաղնակներ պիտի բաժնուին իրարմ։ »

Յետոյ Մոսկովա փաշան խնդրեց Հել-

* Գաղղիոյ արդի Սահմանադրութեան համեմատ, Հանրապետութեան նոր նախագահն մ'ընտրուի ծերակուտի և երեսմեքական ժողովներուն մէկտեղ զատով կը կատարուի, և այս է վեհաժողով (բոնիտ) կոչուածը։

Ինչ պատուիրակներն որ բանակցութեանց սկզբնաւորութիւնը փետրվար 29ին ձգուի՝ Կ. Պոլսէն յանձնախմբին առանց պարտք և կոտորած փաշային դաւաճան համար, որ վերջնական հըրաձանգները պիտի ընել։

Լոնտոն 30 յունի.

Անգլիոյ պաշտօնին զեղէն 100ին էր թաւ։

Փարիզ 30 յունի.

Մարէշալ Մարք-Մանիէ այսօր կէս օրէն յետոյ ի Վէրսայի դաւանութիւնը նախարարաց խորհրդին պիտի նախագահէ, և հրաժարական պիտի տայ զբաւորապէս պատճառաւորութեան զայն։

Հանրապետութեան նոր նախագահն ընտրելու համար վեհաժողովը անմիջապէս յետոյ պիտի ղուարի։

Փարիզ 30 յունի.

(Պաշտօնակաւ)։ — Մարէշալ Մարք-Մանիէ հրաժարական տուաւ։

Հանրապետութեան նոր նախագահն ընտրելու համար վեհաժողովը այս իրիկուն ժամ 6 1/2ին ինքնա հրապարակէ։

Վէրսայ 30 յունի.

Մերակուտի և երեսմեքական ժողովներուն նախագահները Մարէշալ Մարք-Մանիէի նախաձեռնութեամբ, որ կը յայտարարէ թէ ինք չընտրուի հաւանի զինուորական մեծ հրամանատարութեանց նը կատմամբ առաջարկեալ փոփոխութեանց, փոփոխութիւնը դորս ինք բանակին և երկրին շահուց հակառակ կը նկատէ։ Մարէշալը կը յարէ թէ ինք 35 տարի շաբունակ երկրին ծառայած է պարտուց և պատուոյ համեմատ, ինչպէս նաեւ բացարձակ անձնութեամբ մ'առ հայրենիս։

Վէրսայ 30 յունի.

Վեհաժողովը ժամ 6 1/2ին Պ. Մարք-Մանիէի նախագահութեան ներքեւ լայնութիւնը նոր նախագահն ընտրութեան ձեռնարկեց։ Ահաւասիկ արդիւնքը։

Գուգարուք	715
Յայտնեալ քուէք	670
Բացարձակ առաւելութիւն	556
Պ. Կրէյի 365 քուէ ստացաւ և ընտրուեցաւ։	
Շանգի զօրավարն 99 քուէ ստացաւ։	
Ապիտակ կամ ոչինչ քուէք	45
Պ. Կրէյի 7 տարուան համար Հանրապետութեան նախագահ հրապարակեցաւ։ (Որոտաղին ծախհարութիւն)	
Լոնտոն 30 յունի.	
Օմ. Բոն. 42	
Փոյս. 1865 45 1/4	
» 1869 45	
» 1871 54	
» 1872 22	
» 1873 42 5/8	
» Եղիպտ. 70 3/8	
Անգլ. Բոն. 95 5/16	
Փարիզ 30 յունի.	
Օմ. Բոն. 41,83	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Կ. Պոլսոյ նախահանգաւորին վերադառնալ Բաթում փաշան Միւշիլին առաւելահաւ ծովային դործոց նախարար (Գաղղիական տեղեւ) անուանեցաւ։

Կայսերական երրորդ զօրաբանաւ կին Միւշիլ և Ենի-Շէհիլի դորաւ բաժնին հրամանատար Ալի Սալիկ փաշան թիւթանօգարանի վերադառնալ անուանեցաւ։

Օմ. արժեթովի ունեցող անգլիացեայ և գաղղիացեայ կողմէն իր պատուիրակ Կ. Պոլսի դաւանող Թօք-վիլ մարքիսը Թուրքիոյ բոլոր պարտքերը միայնելու ծրագիր մը ներկայացուցեր էր Բ. Գրան, և անոր հաւանութիւնն ստանալու կաշխատէր Գաղղիոյ գեապանին աջակցութեամբ։ Կըսուի թէ Բ. Գուգն, որ արդէն նը պատաւոր էր յիշեալ ծրագրին, այժմ կատարելապէս ընդունելու է զայն, և պայմանաւորութիւն մ'իւր ստորագրուէր է։

Օմ. արժեթովի թէ Եւրոպաւ կան հրապարակաց և թէ Ղալաթիոյ Պորային մէջ այս օրերս բարձրանալն այս իրողութեան կը վերաբերեն ոմանք։

Վերջին թիւերը լաւագոյն առնուած անգլիական լրագրաց մէջ հետեւեալ հետադիրը կը տեսնուի։ Կ. Պոլսէն քաջուած։

«Հայաբեմ վաշա հրաման ստացաւ Եւրոպայի ծովային վրայ նախաձեռնողներն և Տօքեր հրապարակելու։ Կը յայտարարուի որ այս միջոցով մարտաւարաց հաւանութիւնը կաւանան, և զեղծմանց առաջը կատարուի։ Կըսուի թէ այս չինութիւնները Եւր. Գաղղի Միւշիլի կողմէն ընկերութեան մը ձեռք արեւի կատարուին։ »

Օմանեան արուեստական վարժարանին տնօրէն Մարիոսեան Գրիգոր Էֆէնտին ծրագիր մը ներկայեցրէ թիւթագրամաց բարձրանալ յանձնաժողովոյն և Եւրոպայի նախարարին, առաջարկելով որ թիւթագրամի վրայ կատարուած դործողութեանց համար յատուկ Պորա մը հաստատուի, և անոր եկամուտն յիշեալ վարժարանին կապուի։ Այս առաջարկութիւնը Պետական խորհրդոյ քննութեան յղուեցաւ։

Գաղղիական կառավարութիւնը, Թուրք-Հելլենական սահմանադիր խնդրոյն կարեւորութիւն ստանալուն վրայ, Եպիքոսի Արթուր քաղաքին մէջ վրիւ-հիւպատոսութիւն մը հաստատել որոշած է։

Բրէյլէզայէն յունի. 7/19 թուականաւ դրուած նամակ մ'ալ կը ծանուցանէ թէ մտաւոր Գաղղիական մարտանաւ մը պիտի գայ ի Բրէյլէզա, և Թուրք-Հելլենական յանձնախմբին բանակցութեանց ժամանակ յիշեալ քաղքին նախահանգաւոր պիտի կրապասէ։

Չորեքշաբթի օրը Պայպիտի հըրապարակին մէջ 21 միլիոն 750 զրշի թիւթագրամ պայեցաւ։

Մարաշէն կը գրեն թէ անցեալ զեկտ, ամսոյ 10/22ին սաստիկ փութորիկ մ'երկելով, 24 ժամէն աւելի տեւեր, և բազում քիւսս դործեր է։ Բազում ոչխար և չորս ալ մարդ մեռեր են։

Մասնաւոր հեռագիրք կը ծանուցանեն թէ Օտէսայի նախահանգաւոր սառեր է։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ

Երկ իրիկուն զոգուեցաւ	43,40
Այս առաւօտ բացուեցաւ	43,48
Կէս օրին	43,29
Բուժիկի երկութեւն	Քր. 47
Բաժնաւորութիւն	Վր. 436

Օմ. Կայսերական Պանքան այսօր 120 զրշ զին օրոյած է փոխանակութեան։

Խաղիւղ 18 յունի. 1879

... Տէր.

Կը խնդրուի Չեր ազդաւորութեանն որ ներքինեալ ազդը ձեր պատահական թիւթին միջոցաւ հրատարակել բարեհաճութեամբ, ընդունելով կանխաւ մեր շնորհակալեաց անկեղծ հաւատին. որով մնամք...

Ս. Ն. Սանուց ընկերութեան

Լիւի. Ժողովոյ
Ատենապետ
Նի. Ս. Թիւթեմեքէն Բ. Թիւթեմեքէն

ՀՐԱՆԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ

Ս. Ն. Սանուց ընկերութեան

Ս. Ներքինեան Սանուց ընկերութեան նկատուելի յառաջիկայ կիւ-

րակէ օր ի 20 յունիսին, ի Ս. Ներքինեան վարժարան, ժամը ճիշդ ճիւղ։

Կը հրապարակուի պատուարժան անգամակիցը ներկայ գտնուելով կատարել իրենց ազդաւորական պարտաւորութիւնը։

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկագիր Տնօրէն խորհրդոյ Ս. Ն. վարժարանի վիճակին վրայ.
2. Հրաժարագիր Տնօրէն խորհրդոյ։

... Խմբագիր Տէր.

Յետագայ ազդը Չեր պատուական լրագրոյն մէջ հրատարակելիդ կը խնդրեմք։

Խիզանի Ռուս մանաւորաց ընկերութեան Լիւի-Հանուր ժողովը նկատուելի յառաջիկայ կիւրակէ 21 յունիսին ի կեղծման վարժարանն Ղալաթիոյ։ Ատենան պիտի բացուի ժամը ճիշդ 7ին կը հրապարակուի Մեծ, ընկերները որոշեալ ժամուն ներկայ գտնուելու բարեհաճին։

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերաքննութիւնն կանոնադրութեան։

1879 յունի. 17 Ատենապետ
Ընդհանուր ժողովոյ
Խ. Յ. Սարգիս

ԼՍԱՐԱՆ

ԸՆԹԵՐՑԱՄԻՐՈՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի Թաթրոնի Բաթրոնի Ընկերութեան Օրհնագիր
Բ. ՇԻՍՆ—Ե. ԵՐԵՆՈՑԻ
1878 յունի. 19 ՈՒՐ. գիշեր ի ժամ 2 1/2

ՄԱՍՆ Ա.

Նուագ քառածեւն (Գաղղիական վրայ)
Օր. Նարդոս և Տ. Էֆ. Չուխանեան
Ուղեւոր Օլմիսիա.—Տ. Չուխանեան
Բանախօսութիւն.—Յ. Էֆէնտի ճէհիգե

ԼՈՑ Ս

ՄԱՍՆ Բ.

Նուագ.— (Գաղղիական վրայ) — Նոյնը
Սէփիւսիս—Բոսնիէ
Նուագ.— Օր. Նարդոս
Օրիանթալ Մաղուքա տը Սալոն.—Տ. Չուխանեան

Բանախօսութիւն.— (Նոյն)

(Շարունակութիւն և վերջ)

ԱԶԳ

Ներկայ տարին երէկ ի վեր բազմութիւ կարեւոր և օգտակար գրեանց տպագրութեամբ նշանաւոր եղող իղմիւրի Տէտէեանց տպարանին տնօրէնական տէր մեծարդոյ Եղբարք Տէտէեան պայմանագրութիւն մը կնքած էին Ս. Ղ. և Նաղմաճեանի հետ իրենց տրապարանէն ելած գրքերը մի միայն առանց զրկելու համար։

Սոյն պայմանագրութեան պայմանաւորութեամբ յունի. ամսոյ 20ին լըրանալով, կը ծանուցուի ամեն Հոյ գրաւաճառաց թէ կրնան ուղղակի գիւնը Տէտէեան եղբարք, և անոնց տպարանէն ելած գրքերն ստանալ ըստ օրինի պէտք եղած զեղծով։

Ի Ա Ն

Նիզամիէ տէպալխանէսլլէ Սալաւանէսի իշիւն լուգումի օրուս միւս պայեա օրուսնապ օրան օն իքի պին օգրա պալըք ետըլըն իւչ պին օգրա օր լալըքի գարարընաւ հէման վէ գուսուրը տալի շէհրի իքիլէք

